ՀԽՍՀ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ
(1960—1980-ական թվականների առաջին կես)

Ա. Դ. ՇԱՀԻՆՅԱՆ

Սոցիալիստական հասարակարգի հեղափոխական վերափոխումները նոր խնդիրներ են ներկայացնում նաև հասարակագիտությանը՝ առաջադրում գիտահետազոտական աշխատանքների արմատական վերակառուցման, հասարակության մեջ ընթացող պրոցեսների ճիշտ գնահատման, պատմության «սպիտակ բծերի» համարձակ վերհանման պահանջներ։ Հասարակական կյանքի խոր իմացությունը, դրա ներքին զարգացման դիալեկտիկայի ուսումնասիրումը հասարակագիտության առաջ բարձրացնում են թե՛ տեսական և թե՛ կոնկրետ գործնական բազմաթիվ պրոբլեմներ, որոնք վերաբերում են ինչպես ընդհանրապես հասարակության սոցիալական կառուցվածքին, այնպես էլ մասնավորապես վերջինիս բաղադրամասը կազմող հիմնական սոցիալական միավորին՝ բանվոր դասակարգին։ Եվ դա հասկանալի է։ «Խորհրդային հասարակության մեջ,— ինչպես ասված է ԽՄԿԿ XXVII համագումարի փաստաթղթերում,— ավանգարդային դերը պատկանում է բանվոր դասակարգին։ Բանվոր դասակարգը սոցիալիստական արտադրության սիստեմում ունեցած իր դիրքի, քաղաքական փորձի, բարձր գիտակցականության ու կազմակերպվածության, աշխատանքային և քաղաքական ակտիվության շնորհիվ համախմբում է մեր հասարակությունը, առաջատար դեր խաղում սոցիալիզմի կատարելագործման, կոմունիստական շինարարության ասպարեզում»[1]։ Փորձենք քննել Հայկական ԽՍՀ բանվոր դասակարգի սոցիալական փոփոխությունների որոշ հարցերը հետվաթսունական թվականներին ընկած ժամանակաշրջանում։ Նախապես նշենք, որ քննվող ժամանակաշրջանում այդ դասակարգի սոցիալական զարգացման մեջ ի հայտ են եկել որոշակի սուր կողմեր, որոնք, բնականաբար, ստեղծել են սոցիալական քաղաքականության լարվածություն, ինչը համակողմանի վերլուծության անհրաժեշտություն է առաջացնում։ Սակայն բանվոր դասակարգի փոփոխությունների շատ հարցեր նման սահմաններում չեն կարող ամբողջական մեկնություն ստանալ։ Դրանք առաջին հերթին քանակական և որակական փոփոխությունների (ազգային կազմի, դեմոգրաֆիական սեռատարիքային կառուցվածքի) և այլ հարցեր են։ Դրանցից մենք կանդրադառնանք միայն քանակական փոփոխությունների հարցերին, իսկ մյուսներին՝ այնքանով, որքանով անհրաժեշտություն կառաջանա այդ փոփոխությունների քիչ թե շատ ամբողջացման համար։ Հայտնի է, որ 1960-ական թվականներին մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակն առաջացրել էր հասարակական կյանքի բոլոր կողմերի կառավարման նոր համակարգի անցնելու պահանջ, որը նկատվել էր նաև Հայկական ԽՍՀ հասարակական կյանքի զարգացման մեջ։ Պահանջվում էին արմատական փոփոխություններ, սակայն ժամանակին դրանք չըմբռնվեցին։ Էքստենսիվ զարգացման հնարավորությունները սպառվեցին, իսկ երկիրը նախապատրաստված չէր ինտենսիվ առաջընթացի, որին մեծապես կաշկանդում էր գերատեսչական պատնեշը։ Ավելի ու ավելի էր զգացվում էքստենսիվ ուղու տնտեսական աննպատակահարմարությունը, փաստորեն արտադրության ընդլայնումը չէր ուղեկցվում տեխնիկական առաջադիմությամբ, աշ-

[1] *Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարի նյութերը, Երևան, 1966, էջ 70—71։*

խատանքի բնույթի և բովանդակության մեջ էական տեղաշարժեր տեղի չէին ունենում։ Այդ պատճառով էր, որ արտադրության մեջ գնալով ձեռքի աշխատանքով զբաղվածների թվի կրճատման փոխարեն նկատվում էր դրա բացարձակ աճ։ Այսպես, 1985 թ. տվյալներով ձեռքի աշխատանքով զբաղված էր մոտ 50 մլն մարդ, այդ թվում՝ արդյունաբերական բանվորների մեկ երրորդը, շինարարության մեջ զբաղվածների կեսը, գյուղատնտեսական աշխատողների երեք քառորդը[2]։ Նկատենք, որ ձեռքի աշխատողների բաժինն ավելի բարձր է մեր հանրապետության նյութական արտադրության մեջ զբաղվածների կազմում։ Նման իրողությունը, ինչ խոսք, դրական չի կարելի գնահատել։

Խորհրդային հասարակության ներկա ժամանակաշրջանի բանվոր դասակարգի քանակական և որակական փոփոխությունների վերաբերյալ ստեղծվել է բավականաչափ գրականություն[3], այդ թվում նաև միութենական հանրապետությունների, առանձին ռեգիոնների մակարդակով[4]։ Սակայն պետք է նկատել, որ գրականության մեջ, այդ թվում բանվոր դասակարգի քանակական կողմին վերաբերվող ուսումնասիրություններում, մեծ է կրկնության բաժինը, «առավել ևս, ստեղծվում է այն տպավորությունը, որ թեմատիկան ավարտվում է»[5]։ Այնինչ, ԽՄԿԿ XXVII համագումարն առանձնահատուկ ձևով շեշտեց դասակարգերի և հասարակական խմբերի փոխհարաբերությունների ուսումնասիրման հարցը, ընդգծելով այդ պրոբլեմի տեսական և գործնական կարևորությունը։ Այս կապակցությամբ սրությամբ պետք է դիտարկվի նաև քանակական փոփոխությունների հարցը։

Բանվոր դասակարգի քանակական զգալի աճը քննվող ժամանակամիջոցում ընդհանուր երևույթ է եղել մեր երկրի սոցիալ դասակարգային կառուցվածքի զարգացման համար։ Այդ դիտարկման արդյունքները ողջ Միության և հանրապետության մասշտաբով տեսանելի են ստորև բերվող № 1 աղյուսակում։

Աղյուսակ 1

Բանվորների քանակական աճը ԽՍՀՄ-ում և ՀԽՍՀ-ում համապատասխան տարիներին (հազ. մարդ)[6]

Տարիներ	1960	1970	1980	1985	1960 1985 թթ. աճը տոկոսով
ԽՍՀՄ	46254	64844	78830	81702	180
ՀԽՍՀ	304	593	842	944	310

Բերված տվյալներից երևում է, որ 1960 թ. համեմատությամբ ԽՍՀՄ բանվոր դասակարգի թիվը 1985 թ. աճել է 35448 հազ. մարդով, ՀԽՍՀ բանվոր դասակարգի թիվը՝ 640 հազ. մարդով, կամ համապատասխանաբար 180 և 310 %-ով։ Ամբողջ Միության համեմատությամբ մեր հանրապետության

---

[2] ЭКО, 1985, № 14, с. 22.

[3] Рабочий класс и индустриальное развитие СССР, М., 1975, В. С. Семенов, Совершенствование социальной структуры развитого социалистического общества, М., 1978, Развитие рабочего класса в социалистическом обществе, М., 1982, Л. А. Гордон, А. К. Назимова. Рабочий класс СССР: Тенденции и перспективы социально-экономического развития, М., 1985, и др.

[4] Р. А. Азизбекян, Рост культурно-технического уровня рабочего класса Советской Армении в условиях развитого социализма, Ереван, 1984, Научный коммунизм, 1982, № 3, И. И. Комогорцев, Промышленность и рабочий класс Сибири в период строительства коммунизма, 1959—1965, Новосибирск, 1971, и др.

[5] Вопросы истории, 1988, № 1, с. 4.

[6] Հաշվարկը կատարվել է СССР в цифрах в 1983 г., М., 1984, с. 160—161, Народное хозяйство СССР за 70 лет, М., 1987, с. 415 տվյալներով։

բանվոր դասակարգի առավել ինտենսիվ աճը պատճառաբանվում է մեզ մոտ բաղաքակենտրոնացման մեծ աստիճանով, շինարարական աշխատանքների լայն թափով, տնտեսության համապատասխանաբար արագ վերելքով։ Սկսած 1960-ական թվականներից հանրապետությունում արդյունաբերության և շինարարության զարգացման տեմպերը միշտ էլ բարձր են եղել ԽՍՀՄ միջինից։ Ընդհանուր առմամբ այս երևույթը պահպանվել է նաև հետագայում։ Դա բացատրվում է «ավելցուկային» աշխատուժի առկայությամբ, գյուղատնտեսության օգտակար հողատեսքերի սակավությամբ և այլ գործոններով։ Մասնավորապես հիմնականում միգրացիայի հետևանքով փոփոխվում է քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը։ Այսպես, եթե 1959 թ. հանրապետության քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը կազմել էր 50 և 50, ապա 1985 թ. եղել է 67,6 և 32,4 %։ Նույն ժամանակաշրջանում ՀԽՍՀ ամբողջ բնակչությունն աճել է 188,1, քաղաքայինը՝ 253,2, գյուղականը՝ 121,9 %-ով[7]։ Նկատենք, որ նույն ժամանակաշրջանում երկրի ամբողջ գյուղական բնակչությունը բացարձակ առումով նվազեց մոտ 10 %-ով, մինչդեռ նրա տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության կազմում համապատասխանաբար դանդաղ կրճատվեց։ Ընդ որում, ծնելիության մակարդակով քաղաքային ու գյուղական բնակչության միջև 1960-ական թվականներին առկա զգալի տարբերությունը որոշակիորեն հաղթահարվեց 1970—1980-ական թվականներին[8]։ Դա նշանակում է, որ քաղաքային բնակչության աճը զգալի չափով ընթացել է գյուղականի հաշվին։

Հայաստանի բնակչության, այդ թվում նաև բանվոր դասակարգի աճի հիմնական առանձնահատկությունը մեխանիկական շարժն է։ Այն տեղի է ունենում ինչպես միջհանրապետական միգրացիայի, այնպես էլ հայրենադարձության հաշվին։ Վերջինիս հետևանքով խորհրդային իշխանության տարիներին հայրենիք է վերադարձել ավելի քան 200 հազ. մարդ[9]։ Ի հաշիվ մեխանիկական շարժի ՀԽՍՀ բնակչությունը 1959—1970 թթ. ավելացել է 145,8 հազ., իսկ 1970—1979 թթ.՝ 110 հազ. մարդով։ Այլ կերպ ասած, 1959—1970 թթ. հանրապետության բնակչության թվի ընդհանուր հավելաճի 20, իսկ 1970—1979 թթ.՝ 20,5 %-ը բաժին են ընկել մեխանիկական աճին[10]։ Արտասահմանում և հատկապես մյուս հանրապետություններում ապրող հայերը հիմնականում քաղաքաբնակ են և ՀԽՍՀ տեղափոխվելով գերազանցապես համալրում են քաղաքային բնակչության կազմը։ Նկատելով միգրացիայի հիմնական մոտիվներից (աշխատանք, կրթություն, ընտանեկան պայմաններ և այլն) կարելի է ենթադրել, որ եկողների գերակշռող մասը գտնվում է երիտասարդ աշխատանքային հասակում[11]։ Քաղաքային զբաղված բնակչության թվաքանակում 1970 թ. բանվոր դասակարգը կազմել է 65,2, իսկ 1979 թ.՝ 65,6 % կամ 511 հազ. նոր քաղաքաբնակներից բանվոր դասակարգի շարքերը լրացրել են 331,6 հազարը, որը կազմում է նոր քաղաքաբնակների թվի մոտ 65 %-ը[12]։ Այսպիսով, քաղաքային բնակչության աճի համեմատ ավելի բարձր աճ է նկատվում բանվոր դասակարգի մեջ։ Դա այդ դասակարգի քանակական կազմի փոփոխման օրինաչափություններից է։ Հարկ

---

7 Народное хозяйство Арм.ССР в 1985 г., Ереван, 1988, с. 7.

8 Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 9։

9 Հ. Ու. Մելիքսետյան, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920—1980 թթ.), Երևան, 1985, էջ 448։

10 Հաշվարկը կատարվել է՝ Գ. Ե. Ավագյան, Հայկական ՍՍՀ բնակչությունը, Երևան, 1975, էջ 199, Народное хозяйство Арм. ССР в 1978 г., Ереван, 1988, с. 8 տվյալներով։

11 Գ. Ե. Ավագյան, նշվ. աշխ., էջ 122—126։

12 Հաշվարկը կատարվել է Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм.ССР, т. 2, М., 1981, с. 13; Народное хозяйство Арм. ССР в 1984 г., Ереван, с. 7 տվյալներով։

է նշել, որ չնայած հետագա զարգացման ընթացքում բանվոր դասակարգի քանակական աճի տեմպերը թուլանում են, այնուհանդերձ բացարձակ թիվը շարունակում է արագ աճել[13]։ Այս ընդհանուր միութենական երևույթը ՀԽՍՀ-ում դրսևորվում է առավել ինտենսիվ ձևով։ Եթե ելակետային ընդունենք 1960 թ. մակարդակը, ապա վերջին քառորդ դարում բանվոր դասակարգի քանակական աճը կունենա հետևյալ տեսքը։

Աղյուսակ 2

Բանվոր դասակարգի քանակական աճը 1960—1985 թթ.[14]
(տոկոսներով)

Տարիներ	1960	1965	1970	1975	1980	1985
ԽՍՀՄ	100	122	149	156	172	177,7
ՀԽՍՀ	100	149,8	195,3	229	277,2	287,3

Ինչպես ցույց է տալիս № 2 աղյուսակը, վերջին 25 տարում ԽՍՀՄ-ում բանվոր դասակարգի թիվը մեծացել է շուրջ 1,8, իսկ ՀԽՍՀ-ում՝ մոտ 3 անգամ։ Աճի տեմպերի պատկերն ավելի որոշակի կլինի, եթե ելակետ վերցնենք զարգացման ամեն մի աստիճանի համար նախորդ աստիճանը[15]։

Աղյուսակ 3

Տարիներ	1960	1965	1970	1975	1980	1985
ԽՍՀՄ	100	122	116,1	111,4	109	102,8
ՀԽՍՀ	100	149,8	128,2	117,6	120,8	107,2

№ 3 աղյուսակից նկատելի է, որ երկրի բանվոր դասակարգի աճման տեմպերը իջնում են։ Այդ միտումը տեսանելի է նաև ՀԽՍՀ-ում։ Համընդհանուր այս երևույթի հիմքում ընկած են արտադրական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները։ Սակայն ճիշտ են այն ուսումնասիրողները, որոնք գտնում են, թե մեր երկրում դեռևս գերակշռում են մասնակի մեքենայացումը և ավտոմատացումը, որը, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, լրիվ չի լուծում ձեռքի չորակավորված և ծանր ֆիզիկական աշխատանքի վերացումը նյութական արտադրության մեջ[16]։ Այսինքն, տնտեսական վերելքը և արտադրության ընդլայնումը կատարվել է նոր աշխատող ձեռքերի ընդգրկման հաշվին, ցածր է եղել աշխատանքի արտադրողականությունը, գիտության և տեխնիկայի նվաճումները ներդրվել են դանդաղ և այլն։ Ի դեպ, տնտեսագիտական միտքն այդ երևույթների գնահատումներին առավել համարձակորեն մոտեցավ 1985 թ. ապրիլյան պլենումից հետո ընկած ժամանակաշրջանում։

Ամբողջությամբ վերցրած ԽՍՀՄ միջինի համեմատությամբ ՀԽՍՀ-ում ժողովրդական տնտեսությունը մեքենայացման ու ավտոմատացման ավելի

---

13 С. Л. Синявский, Рост рабочего класса СССР (1951—65 гг.), М., 1966. с. 203—214; Рабочий класс СССР: 1960—1970 гг., М., 1979, с. 60 и др.

14 Հաշվարկը կատարվել է СССР в цифрах в 1982 г., М., 1983, с. 113, СССР в цифрах в 1983 г., с. 160—161; Народное хозяйство Арм.ССР в 1982 г., с. 185; Народное хозяйство Арм. ССР в 1984 г., с. 213 տվյալներով։

15 Հաշվարկված է նույն նյութերի հիման վրա։

16 Социально-экономические аспекты роста культурно-технического уровня промышленных рабочих, Воронеж, 1980, с. 15.

ցածր մակարդակ ունի[17], որը և պայմանավորում է այստեղ բանվոր դասակարգի աճի համեմատաբար բարձր տեմպերը։ Բավական է նշել, որ ձեռքի աշխատանքի բաժինը 1980-ական թվականների սկզբին հանրապետության արդյունաբերության մեջ կազմում էր 55 %[18]։ Ըստ Ա. Աղանբեկյանի հաշվումների, ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների ու կոլտնտեսականների գրեթե կեսը զբաղված է ձեռքի աշխատանքով և միայն 2000 թ. նրա տեսակարար կշիռը կկրճատվի և կիջնի մինչև 15—20 %-ի[19]։ Դա ինքնին տրամաբանական է ու անհրաժեշտ, քանի որ այսօր արդեն ԽՍՀՄ-ում ընթանում է դանդաղ, բայց հաստատուն հորիզոնական ու ուղղահայաց տեղաշարժ դեպի մտավորն ու ստեղծագործականը, դեպի որակավորման բարձրացումը և այլն։

Այսպիսով, ընդհանուր եզրակացությունն այն է, որ քննվող ժամանակաշրջանում բանվոր դասակարգի սոցիալական զարգացման հիմնական ուղղվածությունը քանակական աճն էր։ Ընդ որում, այն տեղի էր ունեցել արտադրության նախկին տեխնիկական-տնտեսական հիմքի վրա, էքստենսիվ զարգացման շնորհիվ։ Հետևաբար, քանակական աճը նման պայմաններում չի ուղեկցվել անհրաժեշտ որակական փոփոխություններով։ Այս պայմաններում որակական փոփոխությունների ասպարեզում ի հայտ եկած ամենափոքր իսկ նվաճումը ուսումնասիրողների կողմից դիտվում էր որպես հեղափոխական թռիչք, իսկ ամեն մի բանվորական մասնագիտության ուսուցում՝ կադրային բանվորի ձևավորում։ Եվ դա է պատճառը, որ պրոբլեմով զբաղվող որոշ մասնագետներ այսօր էլ գտնում են, որ երեք տարին բավարար է կադրային բանվոր դառնալու համար[20], այն դեպքում, երբ 1920-ական թվականներին Վ. Ի. Լենինը նշում էր, որ դրա համար անհրաժեշտ են երկար տարիներ[21]։ Այս իրողությունները հաշվի առնելով ենթադրվում է, որ բանվոր դասակարգի և՛ քանակական, և՛ որակական բնութագրերը կայունացման տեսակետից առաջիկայում կրելու են էական փոփոխություններ, չնայած, ուսումնասիրողների մեծ մասն ընդգծում է, թե կայունացման միտումները և՛ դասակարգային ու ներդասակարգային, և՛ սեռատարիքային իմաստով ուժեղացել են[22]։ Այսպիսի պնդումը թվում է ժամանակավրեպ. նախ, ինտենսիվ գործոնների ներառումն էական տեղաշարժեր առաջ կբերի սահմանային, այսպես կոչված միջակա, տնտեսական կազմակերպական երևույթների մեջ, որոնց անմիջական ազդեցության տակ կձևավորվի սոցիալ-դասակարգային կողմի բնութագիրը։ Այդ երևույթներից են, օրինակ, արտադրության կազմակերպման տիպը (ինտենսիվ, թե էքստենսիվ), աշխատանքի հասարակական բաժանումը, ճյուղային-տարածքային նոր համամասնությունների հաստատումը և այլն։ Այս հիմքի վրա ըստ էության պարզ է դառնում քանակական աճի՝ որպես սոցիալական ինտեգրացման երևույթի, եղած գնահատականի միանշանակ լինելը։ Որպեսզի մեր կարծիքը հիմնավոր լինի, քանակական աճի քննությունն անհրաժեշտ է լրացնել նրա ներքին կառուցվածքային այնպիսի ենթատեքստերի մերկացմամբ, ինչպիսիք են հարաբերակցությունը սեռատարիքային կառուցվածքում, համալրման աղբյուրներում և այլն։

Բանվոր դասակարգի քանակական կողմի կարևոր բնութագրերից մեկը նրա սեռատարիքային կառուցվածքի վիճակն է։ Նախապես նշենք, որ 1959 թ. համեմատությամբ 1979 թ. բանվոր դասակարգի կազմում կանանց բաժինը

---

17 Հայաստանի ժողովրդական տնտեսություն, 1984, № 10, էջ 16։

18 Նույն տեղում, 1984, №2, էջ 25։

19 ЭКО, 1986, № 6, с. 16.

20 Вопросы истории, 1988, № 1, с. 17.

21 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 45, էջ 26։

22 Социальное развитие рабочего класса, М., 1977, с. 25, 32, 47 и др.

իջել է 0,5 %-ով[23]։ Սակայն, քանի որ ծառայողների ընդհանուր կազմում նրանց տեսակարար կշիռը բարձրացել է, ուստի ժողովրդական տնտեսության մեջ զբաղվածների ընդհանուր թվաքանակում նկատելի է կանանց բաժնի որոշ աճ, որն օրինաչափ է։ Դա պայմանավորված է նրանով, որ վերջին ժամանակները հանրապետության արդյունաբերությունն իր կառուցվածքով ավելի ու ավելի է համապատասխանում կանանց աշխատուժի առանձնահատկություններին։ Բացի այդ, կարևոր նշանակություն ունի բնակչության սպասարկման ոլորտի ճյուղերի արագ զարգացումը։ Այս բոլորով հանդերձ նկատենք, որ, այնուամենայնիվ, նյութական արտադրության ոլորտը դեռևս առանձնահատուկ պահանջներ է պահպանում տղամարդու աշխատուժի նկատմամբ, որի հետևանքով այստեղ աշխատողների ընդհանուր թվում գերակշռողը տղամարդիկ են։ Վերջիններիս տեսակարար կշիռը հատկապես բարձր է շինարարության մեջ, տրանսպորտում, ինչպես նաև բնակարանային-կոմունալ տնտեսության մեջ։

Հանրային տնտեսության մեջ կանանց տեսակարար կշռի աճին զգալիորեն նպաստում է նրանց կրթական մակարդակի և որակավորման աստիճանի բարձրացումը։ Ինչպես ցույց են տալիս վիճակագրական նյութերը, 1959—1979 թթ. բացառությամբ շինարարների, մնացած մասնագիտական խմբերում կանանց բաժինն աճել է[24]։ Աճն առանձնապես շոշափելի է մետաղամշակության ու մեքենաշինության բնագավառում։ Սակայն միշտ չէ, որ դա դրական կարելի է համարել, մանավանդ, եթե չի ուղեկցվում աշխատանքի դյուրացմամբ և տեխնիկական վերափոխումներով։ Այսպես, այնպիսի ծանր և էկոլոգիապես վնասակար բնագավառում, ինչպիսին քիմիական արդյունաբերությունն է, եթե 1959 թ. կանայք զբաղվածների 28 %-ն էին կազմում, ապա 1979 թ.՝ արդեն 48 %-ը, որը դրական երևույթ չի կարելի համարել[25]։ Հայտնի է, որ գյուղատնտեսությունը դեռևս մեքենայացման տեսակետից հեռու է բավարար լինելուց, աշխատատար է և ֆիզիկապես ծանր։ Սակայն այստեղ ևս կանանց բաժինը գնալով մեծանում է (օրինակ, 1959 թ. 53 %-ի փոխարեն 1979 թ. այն կազմել է 59 %)։ Կանանց բաժինը դեռևս բարձր է կոմունալ տնտեսություններում զբաղված բանվորների մեջ (88 %), որը ևս դրական երևույթ չէ[26]։ Այս բոլորով հանդերձ, նկատելի է նաև այն, որ բանվորական մասնագիտությունների մեջ կանանց բաժնի մեծացումն ընթանում է տվյալ ճյուղի մեքենայացման ու ավտոմատացման բարձրացմանը զուգընթաց, աշխատանքի հեշտացմանն ու ծանր ֆիզիկական աշխատանքի վերացմանը զուգահեռ։ Այժմ որպես ընդհանուր միտում դրսևորվող այս երևույթը տեսանելի ապագայում կուղեկցվի ժողովրդական տնտեսության ճյուղային կառուցվածքի փոփոխություններով, որն էական փոփոխություններ առաջ կբերի բանվոր դասակարգի կազմում կանանց և տղամարդկանց հարաբերակցության մեջ։

Քննվող ժամանակաշրջանում որոշակի հարաբերակցություն է ստեղծվել բանվոր դասակարգի տարիքային կառուցվածքում։ Նախ, զգալիորեն հետաձգվում է երիտասարդության մուտքն աշխատանքային գործունեության ասպարեզ, ապա նկատելի է 60 տարեկան և դրանից բարձր տարիքային խմբի ներկայացուցիչների ավելացման որոշ միտում և այլն։ Դրանց վրա ազդում

---

23 Հաշվարկը կատարվել է Итоги Всесоюзной переписи населения 1959 года Арм. ССР, М., 1963, с. 28. Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм. ССР, т. 2, М., 1981, с. 13 տվյալներով։

24 Հաշվարկը կատարվել է Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Арм. ССР. с. 88—89; Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм. ССР, т. 2, с. 182—183 տվյալներով։

25 Հաշվարկված է ըստ նույն նյութերի։

26 Նույն տեղում։

է նաև հանրապետությունում յուրահատուկ դեմոգրաֆիական իրադրությունը, որից ելնելով տարիքային կառուցվածքի փոփոխությունների միտումները յուիստ տատանումներ են տալիս 1960-ական թվականներից մինչև 1970-ական թվականների կեսերը և 1970-ական թվականների կեսերից մինչև մեր օրերը։ Այդպիսիք մանրամասն ուսումնասիրված են տնտեսագիտական գրականության մեջ[27], ուստի հարկ չենք համարում դրանց անդրադառնալ։ Ավելացնենք միայն, որ բանվոր դասակարգի տարիքային կառուցվածքի փոփոխման ամենանշանակալի կողմը (մինչև 1970-ական թվականների կեսերը) 25—44 տարիքային խմբերի գերակշռող լինելն է[28]։

Այս իրողության սոցիալ-տնտեսական դերը դժվար է գերագնահատել։ Այդ տարիքում են կատարվում որակավորման, պրոֆեսիոնալ կազմի փոփոխման հիմնական տեղաշարժերը, դրսևորվում արտադրական և հասարակական ակտիվությունը, բարձրանում աշխատանքի արտադրողականությունը։

1970-ական թվականների կեսերից նկատվում է հանրապետության աշխատանքային ռեսուրսների, այդ թվում բանվոր դասակարգի երիտասարդացում։ Ըստ վիճակագրական տվյալների, նյութական արտադրության ճյուղերում հիմնական աշխատանքային խումբը ներկայացնում են մինչև 39 տարեկան տարիքային խմբերը[29]։ Հանրապետության ժողովրդական տնտեսության ճյուղերից բանվորական կազմով ամենաերիտասարդը մեքենաշինությունն է։ 1979 թ. մինչև 30 տարեկան տարիք ունեցողները (1000 զբաղվածից) ճյուղում կազմել են 520 մարդ, սև մետալուրգիայում՝ 561, գունավոր մետաղների հայթայթման ու հարստահանող արդյունաբերությունում՝ 401, մետաղյա կոնստրուկցիաների արդյունաբերության մեջ՝ 500 մարդ[30]։ Հարկ է նշել, որ արդյունաբերության նշված ճյուղերին հատուկ տարիքային նման կազմը բնորոշ է նաև ողջ ԽՍՀՄ-ին։ Այսպես, 1970 թ. այստեղ երիտասարդների ամենաշատ տեսակարար կշիռը եղել է մեքենաշինարարների ու մետաղագործների (45,8 %), մանածագործների (44,6 %) ու կարող բանվորների կազմում՝ (43,5 %)[31]։

1970—1980 թթ. սահմանագծում բանվոր դասակարգի տարիքային կառուցվածքի հիմնական միտումները պահպանվում էին. նկատելի է հատկապես մեքենաշինարարների ու մետաղագործների տարիքային կազմի երիտասարդացումը, իսկ առանձին մասնագիտություններում բարձր է մինչև 40 տարեկան տարիքային խմբերի բաժինը։ Սպասարկման բնագավառում պահպանվում է բարձր տարիքային կազմը, որը դրական համարել չի կարելի։ Նկատենք նաև, որ տնտեսական աճի էքստենսիվ գործոնների օգտագործման երկարաձգումը չնայած ի հայտ եկող նոր միտումներին, ձգտում է պահպանել բանվոր դասակարգի կազմի համալրման աղբյուրների նախկին հարաբերակցությունը։

Դիտարկենք ևս մեկ հարց. սկսած 1960-ական թվականների կեսերից նկատելի է քանակական աճի հետևյալ առանձնահատկությունը. քաղաքային բնակչության ավելացումը և բանվոր դասակարգի քանակական աճը համալրման աղբյուրների կազմում առաջնային պլան են մղում բնական վերարտադրության ձևը։ Այսպես, երկրի արդյունաբերական կենտրոնների բազմաթիվ ձեռնարկություններում անցկացված սոցիոլոգիական ուսումնասիրություններից պարզվել է, որ բանվորական ծագում ունեցողները կազմել են հարցման ենթարկվածների կեսից ավելին[32], իսկ Մ. Կիմի և Ս. Սենյավսկու

27 Население союзных республик, М., 1977, с. 273 и др.

28 Труд в Арм. ССР, Ереван, 1970, с. 121, Վ. Ա. Կյուրեղյան, ՀԽՍՀ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը արդի փուլում, Երևան, 1978, էջ 82։

29 Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм. ССР, т. 2, с. 94—96.

30 Նույն տեղում, հ. 1, էջ 62—63։

31 Вопросы истории, 1976, № 4, с. 23.

32 Социальное развитие рабочего класса СССР, М., 1977, с. 26—28; Л. А. Костин, С. Л. Костин, Всемерно повышать производительность труда, М., 1971, с. 13.

հաշվումներով միշնակարգ դպրոցների շրջանավարտների 85—90 %-ը դնում են ժողովրդական տնտեսություն և որի 60 %-ից ավելին կազմում են բանվորական ծագում ունեցողները[33]։ Իհարկե, այս երևույթը տարբեր ճյուղերում ու ձեռնարկություններում դրսևորվում է ոչ միանման։ 1960-ական թվականների վերջերից քաղաքում ծնվածներն առաջին անգամ իրենց քանակով սկսեցին գերազանցել գյուղական բնակավայրերում ծնվածներին։ Նույնը կատարվում էր նաև Հայկական ԽՍՀ-ում։ Ըստ էության ոչ գյուղատնտեսական ճյուղերի աշխատուժի պահանջը սկսում է ավելի ու ավելի բավարարվել կյանք մտնող քաղաքային աշխատունակ բնակչության հաշվին։ Եթե երկրում 1961—1966 թթ. ներքին աղբյուրից բավարարվել է աշխատուժի պահանջարկի 29, ապա 1966—1970 թթ.՝ 57 %-ը[34]։ Չնայած այս դրական երևույթին, քննվող ժամանակաշրջանում կոլեկտիվ տնտեսությունները խորհրդային տնտեսությունների վերածման, գյուղերում արդյունաբերական ճյուղերի ստեղծման և դեպի քաղաք գյուղական բնակչության ինտենսիվ շարժի հետևանքով շարունակվում է կոլտնտեսային գյուղացիության հաշվին բանվոր դասակարգի համալրումը։ Դա հանգեցրեց կոլտնտեսային գյուղացիության թվաքանակի կրճատմանը։ Այսպես, 1959 թ. կոլտնտեսականները կազմել են հանրապետության բնակչության 37,5, իսկ 1970 թ.՝ 9,7 %-ը, (ընդ որում՝ գյուղում ծնելիության բարձր գործակցի պայմաններում)[35]։ Բանվոր դասակարգի շարքերը հիմնականում համալրել են երիտասարդ տարիքի մարդիկ։ Դա մի կողմից բացասաբար է անդրադառնում գյուղական բնակչության տարիքային կառուցվածքի վրա, նպաստում նրա «ծերացմանը», իսկ մյուս կողմից՝ «երիտասարդացնում» քաղաքը։ Այսպես, 1979 թ. կոլտնտեսություններում 1000 զբաղված մարդկանցից մինչև 40 տարեկանները կազմել են 524 մարդ, այն դեպքում, երբ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ կազմել են 609 (այդ թվում՝ արդյունաբերության մեջ 674, իսկ մեքենաշինության ու մետաղամշակման բնագավառում 724 մարդ)[36]։ Վիճակագրական նյութերից պարզվում է, որ 1960—1970 թթ. բանվոր դասակարգի տարեկան միջին աճի 20 %-ը կամ ընդհանուր թվով 65600 մարդ ապահովվել են գյուղացիության այն խմբից, որը զբաղված է եղել կոլտնտեսային արտադրության մեջ, իսկ կոլտնտեսային գյուղացիությունից հասարակական մյուս խմբերի աճը նույն թվականներին կազմել է 147318 մարդ, կամ տարեկան 13488 մարդ։ Հասկանալի է, որ նրանց մեծ մասն ընդգրկվել է բանվոր դասակարգի կազմի մեջ։ Սակայն գյուղական բնակչության միգրացիոն տեմպերը 1970—1980-ական թվականներին նվազեցին, որի հետևանքով բանվոր դասակարգի համալրման հիմնական աղբյուրը դարձավ ներքին վերարտադրությունը։ Այսպես, 1970—1984 թթ. բանվոր դասակարգի ընդհանուր քանակական աճը կազմել է 333700 մարդ, որից մոտ 227000-ը կազմել են կոլտնտեսային գյուղացիությունից դուրս եկածները (դա հավասար է ընդհանուր աճի 8 %-ին)։ Ընդ որում, 1970—1975 թթ. վերջիններս կազմել են բանվոր դասակարգի ընդհանուր աճի 9,5 %-ը, 1975—1980 թթ.՝ 9,6 %-ը, իսկ 1980—1984 թթ.՝ 9,4 %-ը[37]։

Այսպիսով, այսօր առավել հստակորեն է դրսևորվում քաղաքային բնակչության դերը՝ որպես համալրման գլխավոր աղբյուրի[38]։ Այլ աղբյուրներից

---

33 Вопросы истории, 1980, № 11, с. 10.

34 Рабочий класс СССР 1966—1970 гг., М., 1979, с. 61.

35 *Հաշվարկը կատարվել է* Итоги Всесоюзной переписи населения 1959 года Арм.ССР, с. 28; Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм.ССР, т. 2, с. 13 *տվյալներով։*

36 *Հաշվարկը կատարվել է* Итоги Всесоюзной переписи населения 1979 года по Арм. ССР, т. 2, с. 94—100 *տվյալներով։*

37 *Հաշվարկված է նույն նյութերով։*

38 Советский рабочий. Социальный и духовный облик, Минск, 1983, с. 16; З. В. Клопов, Социальная динамика рабочего класса СССР, М., 1980, с. 28.

համալրումը շարունակվում է ընթանալ տարիքային կառուցվածքի այնպիսի հաշվեկշռով, որը միանշանակ չի կարելի գնահատել։

Հանրապետության բանվոր դասակարգի սոցիալական փոփոխությունների հասառոտակի դիտարկումից եզրակացվում է, որ նրա կազմում վերջին քսանհինգ տարում կատարվել են ինչպես քանակական, այնպես էլ որակական նկատելի փոփոխություններ։ Սակայն ընդհանուր դրական պրոցեսում դրանք նաև պայմանավորված էին տնտեսության զարգացման էքստենսիվ մոդելով և կրում էին լճացման ժամանակաշրջանի դրոշմը։ Հետևաբար, թե՛ աճի տեմպերի իմաստով և թե՛ սեռատարիքային կառուցվածքի առումով այդ պրոցեսը ներքուստ հակասական է և պահանջում է ավելի խորացված ու բազմակողմանի ուսումնասիրություն։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СОЦИАЛЬНЫХ ИЗМЕНЕНИЙ РАБОЧЕГО КЛАССА АРМЯНСКОЙ ССР
(1960—первая половина 1980-х гг.)

А. Г. ШАГИНЯН

Резюме

Рассмотрение вопросов социальных изменений в составе рабочего класса показывает, что в исследуемый период наметились изменения как в его качественном, так и в количественном росте. Однако этот процесс был обусловлен в основном экстенсивными методами развития экономики. Кроме того, среди источников пополнения рабочего класса республики на первый план вышло увеличение численности городского населения.

SOME QUESTIONS REGARDING THE SOCIAL CHANGES IN THE WORKING CLASS OF THE ARMENIAN SOVIET SOCIALIST REPUBLIC
(1960—first half of the 1980s)

SHAHINIAN S. R.

Summary

An examination of the questions regarding the social changes in the structure of the working class discloses that changes occurred during the period under investigation in both its qualitative and quantitative growth. However, that process was basically conditioned by extensive methods of development in economy. Besides, among the sources of the replenishment of the working class in the country first comes the increase in the number of the city inhabitants.